





**2022 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) 2022թ. թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ 2022 թվականի առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ կառավարման մարմինների սույն զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Կազմակերպության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Կազմակերպությունը:

Կազմակերպության Վարչության անդամներ՝

Վարդան Հարոյան	Վարչության անդամ, Գլխավոր գործառնական տնօրեն, Վարչության նախագահի, Գլխավոր տնօրենի Ժ/պ		31.08.2022թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան	Վարչության անդամ, Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ		31/08/22
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ՖԻՆՔԱ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ԶԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2022 թվականի առաջին կիսամյակի գործունեության մասին սույն զեկույցը ներկայացնում է՝

1. Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
2. Էական դեպքերի նկարագիրը,
3. Կազմակերպության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

«ՖԻՆԸԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությունն փակ բաժնետիրական ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	1,549,987	724,687
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		1,885	152
Հաճախորդներին տրված վարկեր	6	18,247,724	19,810,232
Շահութահարկի գծով ընթացիկ ակտիվներ		51,048	39,814
Օգտագործման իրավունքով ակտիվներ	9	440,189	447,912
Հիմնական միջոցներ	7	120,130	178,728
Ոչ նյութական ակտիվներ	8	199,008	253,591
Այլ ակտիվներ	10	84,383	83,754
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		20,694,354	21,538,870
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտքային արժեթղթերի թողարկում	11	3,540,061	5,030,607
Վարձակալության գծով պարտավորություններ	9	500,013	510,764
Այլ փոխառու միջոցներ	12	10,435,446	9,562,356
Հետաձգված հարկային պարտավորություններ	19	103,042	33,322
Այլ պարտավորություններ	13	279,384	572,409
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		14,857,946	15,709,458
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	15	4,905,960	4,905,960
Գլխավոր պահուստ	15	343,967	343,967
Զբաղիված շահույթ		586,481	579,485
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		5,836,408	5,829,412
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		20,694,354	21,538,870

Վարչության անունից՝

Վարդան Հարոյան

Գլխավոր գործառնական տնօրեն/
Գործադիր տնօրենի ժ/պ



Անուշ Պետրոսյան

Ֆինանսական տնօրեն/
Գլխավոր հաշվապահ

2022թ. մայիսի 6
Երևան, Հայաստանի Հանրապետություն

2022թ. մայիսի 6
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ՖԻՆԶԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությունն փակ բաժնետիրական ընկերություն

**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

	Ծան.	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտ	16	5,344,799	6,499,827
Տոկոսային ծախս	16,25	(1,279,102)	(1,536,214)
Չուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստները	16	4,065,697	4,963,613
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստներ	5,6	(1,516,366)	(2,648,743)
Չուտ տոկոսային եկամուտ		2,549,331	2,314,870
Հաճախորդներին տրված վարկերի պայմանագրային դրամական հոսքերի փոփոխումից վնաս	24	(15,692)	(155,631)
Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	17	72,775	89,400
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ (վնաս)/օգուտ		(26,094)	17,833
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր		-	(14,611)
Չուտ այլ եկամուտներ/(վնաս)	18	161,890	(272,973)
Չուտ ոչ տոկոսային եկամուտ/(ծախս)		192,879	(335,982)
Գործառնական եկամուտ		2,742,210	1,978,888
Անձնակազմի գծով ծախսեր		(1,403,556)	(1,748,827)
Մաշվածություն և ամորտիզացիա	7,8,9	(367,619)	(468,060)
Այլ գործառնական ծախսեր	20,25	(894,319)	(812,091)
Գործառնական ծախսեր		(2,665,494)	(3,028,978)
Շահույթ/(վնաս)՝ նախքան շահութահարկով հարկումը		76,716	(1,050,090)
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	19	(69,720)	148,518
Տարվա զուտ (վնաս)/ շահույթ		6,996	(901,572)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)		6,996	(901,572)

12-78 Էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

«ՖԻՆԶԱՆ» ունիվերսալ վարկային կազմակերպությունն փակ բաժնետիրական ընկերություն

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		4,905,960	297,765	2,023,259	7,226,984
Տարվա վնաս		-	-	(901,572)	(901,572)
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		-	-	(901,572)	(901,572)
Հայտարարված շահաբաժիններ	15	-	-	(496,000)	(496,000)
Փոխանցում գլխավոր պահուստին		-	46,202	(46,202)	-
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		4,905,960	343,967	579,485	5,829,412
Տարվա շահույթ		-	-	6,996	6,996
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		-	-	6,996	6,996
Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		4,905,960	343,967	586,481	5,836,408

12-78 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

«ՖԻՆԵԼ» ունիվերսալ վարկային կազմակերպությունն փակ բաժնետիրական ընկերություն

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

	Ծան.	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ/(վնաս)՝ հարկումից առաջ		76,716	(1,050,090)
ճշգրտումներ՝			
Մաշվածություն և ամորտիզացիա			
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների օտարումից (օգուտ)/վնաս	7, 8, 9	367,619	468,060
		(7,939)	16,618
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	5,6,	1,516,366	2,648,743
Արտարժույթային գործառնականություններից զուտ վնաս/(օգուտ)		87,904	37,764
Պահուստի փոփոխություն	18	(126,500)	279,889
Այլ ոչ դրամական միջոցների փոփոխություն		73,221	175,924
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		1,987,387	2,576,908
Փոփոխություններ գործառնական ակտիվներում և պարտավորություններում			
Փոփոխություններ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում		(27,827)	(302)
Փոփոխություններ անանջալ ֆինանսական ակտիվների տոկոսում		18,560	150
Փոփոխություններ հաճախորդներին տրված վարկերում		(712,916)	1,793,295
Այլ փոխառու միջոցների, պարտքային թողարկած արժեթղթերի մասով տոկոսների հաշվեգրման փոփոխություն		119,941	15,715
Փոփոխություններ այլ ակտիվներում		(13,787)	(21,477)
Փոփոխություններ օգտագործման իրավունքով ակտիվներում և վարձակալության գծով պարտավորություններում		822	(2,167)
Փոփոխություններ այլ պարտավորություններում		(52,079)	(61,533)
Փոփոխություններ բանկերի նկատմամբ պարտավորություններում		-	(1,209,687)
Փոփոխություններ ներդրումային արժեթղթերի տոկոսում		-	(3,078)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների մուտքեր		1,320,101	3,087,824
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր		7,993	-
Հիմնական միջոցների ձեռքբերում		(31,422)	(24,990)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(15,709)	(24,012)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից մուտքեր		-	1,221,451
(Ներդրումային գործունեությունում օգտագործված)/ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր		(39,138)	1,172,449
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վճարված շահաբաժիներ		-	(496,000)
Վարձակալության գծով պարտավորության մարում	14	(211,211)	(227,917)
Փոխառու միջոցներից մուտքեր	14	14,666,097	10,066,256
Փոխառու միջոցների մարումներ	14	(13,204,355)	(13,832,651)
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում		(1,400,000)	-
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր		(149,469)	(4,490,312)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		1,131,494	(230,039)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	5	724,694	704,494
Փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(306,150)	250,239
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	5	1,550,038	724,694
Հավելյալ տեղեկություններ՝			
Ստացված տոկոսագումարներ		4,061,422	5,106,198
Վճարված տոկոսագումարներ		(1,159,161)	(1,523,227)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ստացել հաճախորդներին տրված անհավաքագրելի վարկերի ոչ դրամական մարումներ ակտիվների բռնագանձման տեսքով (2020թ. դեկտեմբերի 31՝ 4,886 հազար)

1. Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը

1.1. Ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» նիդերլանդական կազմակերպությունը:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013թ-ից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Կազմակերպությունն ունի 30 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:


1.2. Ֆինանսական գործունեության վերլուծություն

Սույն ֆինանսական գործունեության ամփոփ վերլուծության համար հիմք են հանդիսացել Կազմակերպության՝ 2022 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները:

Ակտիվներ

Կազմակերպության ընդհանուր ակտիվները 2022թ. Հունիսի 30-ի դրությամբ կազմել են 20,189,632 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա վերջի 20,694,354 հազ. ՀՀ դրամ ընդհանուր ակտիվների համեմատ նվազելով 504,722 հազ. ՀՀ դրամով կամ 2,4%-ով:

Ակտիվների կառուցվածքը 2022թ. Հունիսի 30-ի դրությամբ ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1


Վարկեր

2022 թ. հունիսի 30-ին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 17,868,355 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է 2,1%-ով կամ 379,369 հազ. ՀՀ դրամով:

Շեղանակային ժամանակաշրջանում ժամկետանց պորտֆելի որակի վատթարացմամբ պայմանավորված՝ հիմնական ջանքերը ներդրվել են վարկերի հավաքագրմանն ուղղված աշխատանքներում և առողջացման ծրագրերում, որի արդյունքում հաճախորդներին տրված վարկերը նվազել են:

2022թ. հունիսի վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ վարկատեսակների ներկայացվում է գծապատկեր 2-ում.


Հաճախորդներին տրամադրված վարկերն ըստ վարկատեսակների առ Հունիս 30, 2022թ.



Գծապատկեր 2

2022թ. հունիսի վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ հաճախորդների տնտեսական գործունեության ոլորտների ներկայացվում է գծապատկեր 3-ում.

Հաճախորդներին տրամադրված վարկերն ըստ տնտեսության ոլորտների առ Հունիս 30, 2022թ.



Գծապատկեր 3

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կազմակերպության հիմնական ջանքերը միտված էին վարկերի հավաքագրմանը և առողջացմանը, պայամանվորված, ինչպես հետպատերազմյան ժամանակաշրջանում ժամկետանց պորտֆելի որակի վատթարացմամբ, այնպես էլ 2020 թվականին բնորոշ Covid 19 համավարաքով: Հարկ է նշել, որ 2021թ. երկրորդ կեսում գրանցվեց վարկավորման ծավալների աճ, ինչն էլ շարունակվեց 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում: Ինչ վերաբերում է Կորոնավիրուսով պայամանավորված վարկային վերանայումների ծավալին, ապա մարվել/առողջանալուց հետո 2022թ. հունիսի 30-ի դրությամբ այն կազմել է 1,353,671 հազ ՀՀ դրամ, կամ ընդհանուր վերանայումների 41,6%-ը:

Պարտավորություններ

2022թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության պարտավորությունները կազմել են 14,278,662 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա վերջի համեմատ նվազելով 3,9%-ով կամ 579,284 հազ. ՀՀ դրամով:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները կազմել են 2,940,058 հազ. ՀՀ դրամ կամ պարտավորությունների 20,6%-ը: Հարկ է նշել, որ Կազմակերպության համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը, և Կազմակերպությունը մշտապես գտնվում է տարբեր միջազգային ֆոնդերի հետ կապի մեջ համագործակցության ակնկալքիներով:

Պարտավորությունների 27,8%-ը կազմում են Կազմակերպության կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերը 3,966,255 հազ. ՀՀ դրամի չափով:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցություն

Կազմակերպության ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը: Կորոնավիրուսի և հետպատերազմի ճգնաժամով պայմանավորված՝ վարկավորման ծավալների կրճատմանը զուգընթաց նվազել է նաև փաստացի ներգրավվող ռեսուրսների հարաբերական ծավալները՝ ի համեմատություն նախընթաց ժամանակաշրջանների: Այնուամենայնիվ Կազմակերպությունը շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ապագայում պոտենցիալ ներգրավվելիք ռեսուրսների ապահովման առումով:

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կազմակերպության հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են եղել հետևյալ կազմակերպությունները՝ Symbiotics, Bank im Bistum Essen eG, որոնցից ներգրավված ֆոնդերը ամբողջությամբ մարվել են Կազմակերպության կողմից, սակայն ակտիվ քննարկումներ են ընթանում համագործակցության շարունակելու ուղղությամբ: Կազմակերպությունը շարունակում է համագործակցել Enabling Capital, Agents for Impact կազմակերպությունների հետ, որոնցից դեռ 2021թ.-ի ընթացքում ներգրավել էր 3 մլն ԱՄՆ դոլար և 5 մլն ԱՄՆ դոլար վարկ համապատասխանորեն:

2021 թ. հունիսի 28-ին Կազմակերպությունը վարկային պայմանագիր է կնքել ՀՀ ԿԲ հետ՝ «ՓՄՁ Աջակցություն» ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԲ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացվում է Գերմանահայկական հիմնադրամի (PMU GAF) ծրագրերի կառավարման բաժնի կողմից: Տոկոսադրույքը սահմանվում է Դիտորդ Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից և 5 տարի ժամկետով պետական պարտատոմսերի միջին եկամտաբերությունից, ինչպես նաև շուկայում ՓՄՁ վարկերի գնագոյացման ընդհանուր միտումից: Միևնույն ժամանակ, Խորհուրդը սահմանում է այն արդյունավետ տոկոսադրույքը, որը GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի մասով կարող է գանձվել հաճախորդներից: 2022 թվականի հունիսի 30-ի

դրությամբ «ՓՄՁ Աջակցություն» ծրագրով վարկերի չմարված մնացորդը կազմել է 2,688,888 հազար ՀՀ դրամ:

2021թ. մայիսի 20-ին Կազմակերպությունը ՀՀ Կենտրոնական բանկի հետ կնքել է վարկային պայմանագիր «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրի (երրորդ փուլ) շրջանակներում ՀՀ Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի միջև: Վարկի կառավարումն իրականացնում է Գերմանական հիմնադրամի ծրագրերի կառավարման բաժինը (PMU GAF): Տոկոսադրույքը սահմանվում է Խորհրդի կողմից տարին երկու անգամ՝ ելնելով Կենտրոնական բանկի սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքից, ինչպես նաև շուկայում գյուղատնտեսական վարկերի գնագոյացման ընդհանուր միտումից: 2022թ. հունիսի 30-ի դրությամբ «Գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագրով տրամադրված վարկերի չմարված մնացորդը կազմել է 1,347,005 հազար ՀՀ դրամ:

Համագործակցություն տեղական ֆինանսական կազմակերպությունների հետ

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կազմակերպությունը շարունակել է տեղական ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը, որի շրջանակներում ներգրավել է 800 միլիոն ՀՀ դրամի վարկային գիծ և 3 մլն ԱՄՆ դոլարի երկարաժամկետ վարկ:

Սեփական կապիտալ

2022թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 5,910,970 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 74,862 հազ. ՀՀ դրամով կամ 1,3%-ով:

Եկամուտներ և ծախսեր

Կազմակերպության տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքում կազմել են 2,325,857 ՀՀ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 22.5%-ով կամ 676,810 հազ. ՀՀ դրամով: Տոկոսային և նմանատիպ եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ, ինչպես նաև GAF Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի ցածր արդյունավետ տոկոսադրույքով, որի պայմանները նույնն են Ծրագրի բոլոր մասնակիցների համար:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել են 655,586 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 4,7%-ով կամ 29,362 հազ. ՀՀ դրամով:

Հաճախորդներին տրված վարկերի գծով հնարավոր կորուստների ծախսը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել է 660,633 հազ.

ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 33,9%-ով կամ 339,125 հազ. ՀՀ դրամով, ինչը պայմանավորված է վարկային պորտֆելի որակի բարելավմամբ, ինչպես նաև դուրս գրված վարկերի հետքերումների ծավալի աճով:

Շահութաբերության հիմնական ցուցանիշները

2022 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 74,562 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության շահութաբերության (վնասաբերության) ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ - 2,5% ,

Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ - 0,7%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի(վնասի) ցուցանիշը (EPS) կազմել է 304 ՀՀ դրամ:

Կազմակերպության մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 2022թ. Հունիսի 30-ի դրությամբ կազմել է 12,049 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի (վնասի) ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 39,6:

1.3. Ներքին հսկողության համակարգ

Ներքին հսկողության համակարգը Կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների և գործընթացների նկատմամբ հսկողության ապահովումն է:

Կազմակերպությունում ներկայումս ներդրված է արդյունավետ, միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, որն ամրագրված է Կազմակերպության ներքին իրավական ակտերով:

Ավելին, Կազմակերպությունում գործում են Ռիսկերի, համապատասխանության և ներքին վերահսկողության, Վարկային ռիսկերի և Կորպորատիվ աուդիտի ստորաբաժանումներ, որոնք նպաստում են ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ռիսկերի, համապատասխանության և ներքին վերահսկողության վարչության խնդիրն է Կազմակերպությունում ներդնել արդյունավետորեն գործող ներքին հսկողական համակարգ: Վարկային ռիսկերի վարչության գործառնություն է ապահովել ընդունելի ռիսկերի մակարդակ վարկավորման գործընթացներում: Կորպորատիվ աուդիտի վարչության խնդիրն է բացահայտել Կազմակերպության նպատակների իրագործմանը խոչընդոտող հնարավոր ռիսկերի բացահայտումը և ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

1.4. Կազմակերպության աշխատակիցները

Նվիրված աշխատակիցները Կազմակերպության ամենամեծ ձեռքբերումներից են, Կազմակերպության հաջողության և հետագա զարգացման հիմնասյունը: Կազմակերպության հմուտ մասնագետներից կազմված թիմը համախմբված է մեկ ընդհանուր նպատակի շուրջ և ծառայում է կազմակերպության առաքելությանը, այն է՝ «Հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը»: Կազմակերպությունը առավել քան կարևորում է ընդունված արժեքային համակարգի չափանիշների, միջանձնային դրական հարաբերությունների պահպանումը, ջերմ մթնոլորտը, թափանցիկությունը և, ընդհանուր առմամբ, կորպորատիվ մշակույթը, ինչը ստեղծվել է աշխատակիցների ջանքերի շնորհիվ:

Կազմակերպության աշխատակիցները շարունակում են ջանք չխնայել՝ հաճախորդներին մատուցելով նորարական և օգտակար ֆինանսական ծառայություններ՝ հնարավորություն ընձեռելով ցածր եկամուտ ունեցող անհատներին և համայնքներին ներդրում կատարել իրենց ապագայում և կերտելու ավելի լուսավոր ապագա:

Աշխատանքների արդյունավետ կառավարմանն ու աշխատակիցների զարգացմանը մեծապես նպաստում են ներքին վերապատրաստումները՝ միտված զարգացնելու ֆինանսական տեղեկացվածությունը, հաղորդակցման և բանակցելու ունակությունները, ծանոթացնելու նոր պրոդուկտների և ծառայությունների մանրամասնություններին, վարկավորման տեխնոլոգիաներին, և ապահովելու վարվելակերպի կանոնների պահպանմանը, ինչպես նաև ապահովելու հաճախորդամետ մոտեցում և դրական միջանձնային հարաբերություններ:

Յուրաքանչյուր աշխատակցի հնարավորություն է տրվում զարգացնելու թե՛ մասնագիտական և թե՛ անձնային հատկանիշները, ինչպես նաև ունենալու մասնագիտական առաջխաղացում Կազմակերպության ներսում:

2022 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված աշխատակիցների թիմային ոգու ամրապնդմանը և միջանձնային փոխհարաբերությունների զարգացմանը:

Հիմքեր են ստեղծվել հայաստանյան բուհերից պրակտիկանտների ներգրավման համար, ինչը կարող է աջակցել նոր աշխատակիցների համալրման գործընթացին, քանի որ նրանք կարող են դառնալ մեր պոտենցիալ աշխատողները: Մշակվել է հստակ ծրագիր Կազմակերպության մի քանի բաժիններում պրակտիկան կազմակերպելու համար, ինչպես նաև մի շարք համալսարանների հետ արդեն ձեռք են բերվել նախնական համաձայնություններ:

Շարունակվում են իրականացվել աշխատակիցների գնահատման միջոցառումները, որոնք օգնում են հստակ և թափանցիկ տեղեկության հիման վրա գնահատել աշխատակցի ունակությունները, զարգացնել թույլ կողմերը և ստեղծել առաջխաղացման հնարավորություններ:

Շարունակվում են նաև բարելավվել աշխատակիցների համար նախատեսված արտոնությունները՝ բժշկական ապահովագրության պայմանները, աշխատակիցներին տրամադրվող վարկի պայմանները, որն ի դեպ, մեծ պահանջարկ է վայելում և օգնում է աշխատակիցներին բավարարելու իրենց ֆինանսական կարիքները անհամեմատ բարենպաստ պայմաններով:

Փորձը ցույց է տալիս, որ այս բոլոր գործընթացների արդյունքում աշխատակիցները դառնում են առավել պատրաստակամ և ճկուն՝ դիմավորելու նոր մարտահրավերներ և իրականացնելու արդյունավետ նորամուծություններ:

2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության աշխատակիցների թվաքանակը կազմել է 352 մարդ:

1.5. Տարածքային գործունեություն

Կազմակերպության մասնաճյուղերը տեղակայված են ՀՀ բոլոր 11 մարզերում, և 2022 թվականի հունիսի վերջի դրությամբ դրանց թիվը կազմում է 30:

Կազմակերպությունը մշտապես իրականացնում է կադրերի որակավորման բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, մասնաճյուղերի կապիտալ վերանորոգմանը և տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ իր բոլոր մասնաճյուղերում:

2. Էական դեպքերի նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցի հրապարակման օրը Կազմակերպության գործունեությունում տեղի են ունեցել հետևյալ նշանակալի իրադարձությունները.

- Համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 25/01/2022թ.-ի թիվ 03/2022 որոշման՝ տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021 և 17/12/2021թ. թիվ 41/2021 որոշումները, որոշեցին.
 1. Հաստատել 1,400,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 140,000 (մեկ հարյուր քառասուն հազար) պարտատոմսերի առաջին փուլի թողարկումը երեք տարի ժամկետով, 12% (տասներկու տոկոս) տարեկան տոկոսադրույքով:
 2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 1,190,000,000 (մեկ միլիարդ մեկ հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 119,000 (մեկ հարյուր տասնինը հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 210,000,000 (երկու հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 21,000 (քսանմեկ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:
 3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2022 թվականի փետրվարի 10-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների:
- Համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 07/03/2022թ.-ի թիվ 10/2022 որոշման՝ տնօրենների խորհրդի անդամները որոշեցին 2022թ. մարտի 14-ից վաղաժամկետ դադարեցնել Արամ Ղազարյանի՝ որպես Ընկերության Գլխավոր Տնօրենի և վարչության նախագահի իրավասությունները՝ հաշվի առնելով վերջինիս կողմից իրավասությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ ներկայացված դիմումը:
- Տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021 և 17/12/2021թ. թիվ 41/2021 որոշումները, որոշեցին.
 1. Հաստատել 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 30,000 (երեսուն հազար) պարտատոմսերի

երկրորդ փուլի թողարկումը երկու տարի ժամկետով, 12.5% (տասներկու ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 255,000,000 (երկու հարյուր հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 25,500 (քսանհինգ հազար հինգ հարյուր) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 45,000,000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 4,500 (չորս հազար հինգ հարյուր) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2022 թվականի Ապրիլի 20-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների:

- Տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021 և 17/12/2021թ. թիվ 41/2021 որոշումները, որոշեցին.

1. Հաստատել 1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 56,000 (հիսունվեց հազար) պարտատոմսերի երրորդ փուլի թողարկումը երկու տարի ժամկետով, 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 1,190,000 (մեկ միլիոն մեկ հարյուր իննսուն հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով 47,600 (քառասունյոթ հազար վեց հարյուր) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 210,000 (երկու հարյուր տասը հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 8,400 (ութ հազար չորս հարյուր) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2022 թվականի Ապրիլի 20-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների:

- Տնօրենների խորհրդի անդամները, հաշվի առնելով Կարգավորվող շուկայում՝ Հայաստանի ֆոնդային բորսայի ցուցակման հարթակում ընդգրկվելու համար

տեղաբաշխման նվազագույն ծավալը (100,000,000 ՀՀ դրամ, Cbond-ի դեպքում), որոշեցին չեղյալ համարել Ընկերության Տնօրենների խորհրդի 04/04/2022թ.-ի թիվ 14/2022 որոշման համաձայն 20/04/2022թ.-ին «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի միջնորդությամբ թողարկված 72,850,000 ՀՀ դրամ անվանական ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումը և ծրագրային ազդագրում նախատեսված գործընթացի միջոցով ներդրողներին ետ վերադարձնել տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները:

- 2022թ. մայիսի 26-ի թիվ 19/2022 որոշմամբ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի անդամները որոշեցին գումարել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նիստ, որը տեղի կունենա հեռախոսային կոնֆերանսի միջոցով (իրական ժամանակի ռեժիմում)՝ 2022թ. հունիսի 9-ին, Երևանի ժամանակով ժամը 16:00–ին:
- Տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021, 17/12/2021թ. թիվ 41/2021 և 20/05/2022թ. թիվ 18/2022 որոշումները, որոշեցին.

1. Հաստատել 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 25,000 (քսանհինգ հազար) պարտատոմսերի չորրորդ փուլի թողարկումը երկու տարի ժամկետով, 12.5% (տասներկու ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 212,500,000 (երկու հարյուր տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 21,250 (քսանմեկ հազար երկու հարյուր հիսուն) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ(եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 37,500,000 (երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 3,750 (երեք հազար յոթ հարյուր հիսուն) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1–ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների՝ մեկից ավելի հաջորդական օրերի ընթացքում՝ նախորդ տեղաբաշխման օրվա չտեղաբաշխված մնացորդը հաջորդ տեղաբաշխման օր տեղափոխման եղանակով, մինչև Թողարկման վերջնական պայմաններով սահմանված տեղաբաշխման ամբողջական ծավալի տեղաբաշխումը կամ Թողարկողի կողմից աճուրդի տեղաբաշխման ծավալի կտրման կամ աճուրդը չեղյալ հայտարարելու մասին որոշման կայացումը: Տեղաբաշխման սկիզբը

սահմանել 21.06.2022թ., իսկ ավարտը՝ 27.06.2022թ. ներառյալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի հաստատումը ստանալու դեպքում:

4. Արժեկտրոնների վճարումները սահմանել եռամսյակային պարբերականությամբ

- Տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021, 17/12/2021թ. թիվ 41/2021 և 20/05/2022թ. թիվ 18/2022 որոշումները, որոշեցին.

1. Հաստատել 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմսերի հինգերորդ փուլի թողարկումը երկու տարի ժամկետով, 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 2,125,000 (երկու միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով 85,000 (ութսունհինգ հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ(եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 375,000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 15,000 (տասնհինգ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների՝ մեկից ավելի հաջորդական օրերի ընթացքում՝ նախորդ տեղաբաշխման օրվա չտեղաբաշխված մնացորդը հաջորդ տեղաբաշխման օր տեղափոխման եղանակով, մինչև Թողարկման վերջնական պայմաններով սահմանված տեղաբաշխման ամբողջական ծավալի տեղաբաշխումը կամ Թողարկողի կողմից աճուրդի տեղաբաշխման ծավալի կտրման կամ աճուրդը չեղյալ հայտարարելու մասին որոշման կայացումը: Տեղաբաշխման սկիզբը սահմանել 21.06.2022թ., իսկ ավարտը՝ 27.06.2022թ. ներառյալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի հաստատումը ստանալու դեպքում:

4. Արժեկտրոնների վճարումները սահմանել եռամսյակային պարբերականությամբ:

- Համաձայն Ընկերության միակ բաժնետիրոջ 15.06.2022թ. թիվ 9 որոշման Ընկերության միակ բաժնետերը որոշեց

1. Ընկերության Տնօրենների խորհրդի անդամներ Ֆլորին Լիլային, Ռիչարդ Մարնիին և Մուրադ Մուրադյանին վերանշանակել որպես Ընկերության

Տնօրենների խորհրդի անդամներ սկսած 17.06.2022թ.-ից 3 (երեք) տարի ժամկետով:

2. Վաղաժամկետ դադարեցնել Արարատ Գյուլումյանի՝ որպես Ընկերության տնօրենների խորհրդի անդամի լիազորությունները սկսած 2022թ. հունիսի 17-ից՝ հաշվի առնելով վերջինիս կողմից ներկայացված Ընկերության Տնօրենների խորհրդի անդամի պաշտոնից ազատվելու դիմումը

- Հաշվի առնելով Ընկերության տնօրենների խորհրդի 03.06.2022թ. թիվ 20/2022 որոշմամբ ներկայացված առաջարկը Ընկերության Գլխավոր տնօրենի և վարչության նախագահի պաշտոնում Սթիվեն Մայքլ Հասսի նշանակման վերաբերյալ Ընկերության միակ բաժնետերը որոշեց 2022թ.-ի հուլիսի 1-ից Սթիվեն Մայքլ Հասսին նշանակել Ընկերության Գլխավոր տնօրենի և վարչության նախագահի պաշտոնում 2 (երկու) տարի ժամկետով և նրա պաշտոնավարման սկիզբ համարել ՀՀ կենտրոնական բանկում գրանցման պահից սկսած
- Համաձայն Ընկերության միակ բաժնետիրոջ 04.08.2022թ. թիվ 11 որոշման, Նիվեդիտա Նիտյանանդին նշանակվել է որպես Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ՝ սկսած սույն որոշման կայացման պահից (2022թ. Օգոստոսի 1) 3 (երեք) տարի ժամկետով և նրա պաշտոնավարման սկիզբ է համարվում ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցման պահը:

3. Կազմակերպության հետագա զարգացման նկարագիրը

Կազմակերպության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.

- վարկային պորտֆելի որակի բարելավում, հաճախորդների վարկունակության գնահատման բարելավման և պատասխանատու ֆինանսավորում իրականացնելու միջոցով,
- հաճախորդների դրական փորձառություն ապահովելու միջոցով հաճախորդների պահպանման ցուցանիշի բարելավում, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավում,
- ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա, ֆինանսավորող կազմակերպությունների ցանցի ընդլայնում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում,
- գործարար գործընթացների օպտիմալացում՝ պահպանելով գործառնական ռիսկերի ընդունելի մակարդակը,
- աշխատակիցների որակավորման բարձրացում ներկազմակերպական և արտաքին դասընթացների միջոցով,
- միկրոֆինանսավորման ոլորտում մրցակցային դիրքի բարելավում, նորարարական վարկատեսակների մշակում և ներդրում:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Կազմակերպության առջև դրված նպատակներով և միտված են բարելավել գործունեության ինչպես որակական բնութագրիչները, այնպես էլ ֆինանսական ցուցանիշները:

Հեռանկարային զարգացման ուղղությունները ապահովելու նպատակով Կազմակերպությունը պատրաստվում է իրագործել հետևյալ նախաձեռնությունները.

- Հիփոթեքային վարկերի տրամադրման նոր նախագիծ, որն իր տեսակի մեջ առաջին անգամ է ներդրվելու կազմակերպության վարկային պրոդուկտների ցանկում, և հաճախորդների ներգրավման նոր այլընտրանքային աղբյուր է հանդիսանալու: Նշված ծրագրի շրջանակում Կազմակերպությունը համագործակցելու է Ազգային Հիփոթեքային Ընկերության հետ:
- Վարկավորման գործընթացների օպտիմալացում՝ հաճախորդներին ավել արագ սպասարկելու և հաճախորդի փորձառություն էլ ավելի բարելավելու նպատակով;
- Սքրիինգային համակարգի մշակում և ներդնում, ինչը թույլ կտա հնարավորինս արագ վարկավորման որոշումներ կայացնել՝ նպաստելով էլ ավելի արդյունավետ գործունեությանը և հաճախորդի փորձառության բարելավմանը: